

## ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒ- ԹԻՒՆԸ

Անցեալ փետրուարի 14-ին Փարիզի հիւանդանոցներէց մէկի մէջ կնքեց իր մահկանացուն յայտնի հայ հրապարակախօս Սիմէօն Հախումեանը:

Ով երբէք շփուել է հայկական լրագրական գրականութեան, անշուշտ ճանաչում է Ս. Հախումեանին, թէպէտ կան մարդիկ, որ ոչ միայն շփուել են, այլ իրանց ասելովը գլորուել են հայ գրականութեան մէջ, այնուամենայնիւ չեն ճանաչում նրան, որովհետեւ վարակուած են սովորական կուրուքեամբ և պարզ է, որ այդպիսի կոյրերից հազիւ կարելի է սպասել աւելին քան մէկի ասածը թէ ընա անհաշտ մարդ էր» և միւսինը ընա մեռաւ: Այսպէս որոշեց այդ հրապարակախօսի արժէքը մեր լիքերալ համարուող մամուլը, որովհետեւ ... չը սիրեց նրան:

Ամեն մի պատահական գրողին երկինք բարձրացնել, իսկ իսկական հրապարակախօսներին ուրանալ՝ սա բնաբանն է այն մարդկանց, որոնք ժողովրդի աչքին թող փչելով կարողանում են իրենց թշուառ գոյութիւնը մի կերպ պահպանել:

«Տարազն» անյիշատակ չը թողեց իր աշխատակցին և յարգելով նրան՝ պատուեց մի հանդիսով և 10-րդ համարը նուիրեց նրա յիշատակին: Այդ համարի մէջ մտել են մի քանի սխալ տեղեկութիւններ, օր. նա ծնուած է համարուում փետր. 14-ին, Ս. Հախումեանը բժշկին ապտակելու պատճառով է արձակուել Գէորգեան ճեմարանից և այն: Կամենալով աւելի ճշգրիտ տեղեկութիւններ տալ հանգ. հրապարակախօսի մասին՝ առաջ ենք բերում նորա մեզ ուղղած ինքնակենսագրական տեղեկութիւնները:—

«Ծնուել եմ 1859 թուականի փետրվարի 4-ին Շուշի քաղաքում: Մանկութեանս ուսումը ստացել եմ մեր տան մէջ Պետրոս Շանշեանի աշակերտներից (այդ ժամանակ Պետրոս Շանշեանը տեսուչ էր Շուշուայ թեմ. դպրոցի): Ապա 1870—73 ուսել եմ թեմական դպրանոցում և աւարտել: 1875-ին մտել եմ էջմիածնի ճեմարանը և 1878-ին դուրս եկել այն 11 ընկերներիս հետ, որոնք ծեծեցին ուսուցիչ ձեպեճեանին և աշակերտ

Ստեփան Մալխասեանին: 1900 թուականի նոյեմբերի 1-ից ուսանող եւ Փարիզի Սօրբօնի Գիտութեանց ճիւղի բժշկական ֆակուլտետի, միևնոյն ժամանակ յաճախորդ-ուսանող եւ Քօլլէժ-դը-Ֆրանսի—բարձրագոյն սօսիալական կուրսերի:

«Վարել եւ հետեւալ պաշտօնները.—1879 թուականին եղել եւ ուսուցիչ և տեսուչ Կարսի հայոց երկու սեռի դպրոցների. 1880—82 ուսուցիչ Շուշուայ թեմական և օրիորդական դպրանոցի (պ. Սեդրաք Մանդինեանի տեսութեան օրով և նրա հրաւիրանօք). 1884 թուականին հրաւիրուել եւ տեսուչ և ուսուցիչ Թաւրիզի (Պարսկաստան) հայոց երկուսու դպրոցների: 1885-ին թողնելով մանկավարժական ասպարէզը բոլորովին նուիրուել եւ մամուլին— և գրականութեան. «Եթէ հետաքրքրական է իմանալ, այս ևս աւելացնեմ որ մասնակցել եւ Հայոց ընդհանուր ուսուցչական ժողովին (կարծեմ 1880 թ.) և ընտրուել եւ անդամ Հայկական դպրոցների ծրագիրը կազմող յանձնաժողովին ու մասնակցել նրա աշխատութիւններին: 1885-ից յետոյ Թիֆլիսում երբեմն պարապել եւ մասնաւոր դասերով (Հայերէն և Ֆրանսերէն լեզուներ) և ուսուցչութիւն եւ արել մասնաւոր գիմնադիւաներում և պանսիօններում:

«Աշխատակցել եւ հետեւալ հանդէսներին և լրագրներին.—Մշակին 1885—1890; Տարազ և Աղբիւր 1890—1892, Արձագանքին 1894—1897, այսինքն մինչև դադարելու օրը, Մուրճին (մի քանի ոտանաւորներ), Նոր-Դարին սկսել եւ աշխատակցել 1899 թուին և շարունակում եւ մինչև այժմ: «Թատրոն» հանդիսին աշխատակցել եւ պարբերաբար:

«Իրուսներէն թերթերից Նովօյէ Օբօզէնիէյի աշխատակից եւ հրաւիրուել նրա հիմնարկութեան օրից (խմբագիր Ալեքս. Վաս. Ստեփանով) և շատ աննշան ընդհատումներով գրել եւ շարունակ այդ թերթում նոյնպէս Ն. Նիկօլաձէի խմբագրութեան ժամանակ և դադարել եւ գրելուց թերթը եղբայր Իշխանք Թումանեաններին անցնելուց յետոյ, ոչ թէ այն պատճառով որ դադարել եւ համակրել այդ լրագրին, այլ միայն այն պատճառաւ որ գրական զբաղմունքներս շատ են եղել: Ընդմիջումներով շատ եւ գրել նաև Տիֆլիսսկիյ Լիստօկ թերթում. նոյնպէս «Կավկազ» թերթում Միլիտարի խմբագիր եղած ժամանակ: Կանոնաւորապէս թղթակցել եւ 1880 ական թուականին «Русскій Курьеръ» թերթին, որ հրատարակում էր Մոսկուայում պ. Լանին: Երբեմն գրել եւ մայրաքաղաքի թերթում հայկական կեանքին վերաբերեալ խնդիրների մասին:

(1895 Նով. Վր. նոյեմբեր. համարը չեմ յիշում իմ ստորագրութեամբ առաջնորդող յօդուած որ հերքում է Նով. Վր.-ի հազորգած սխալ լուրերը հայերի մասին):

Բացի դրանից 1882 թուին մարտ ամսին առաջին անգամ հրատարակել եմ «Գործ» ամսագրի առաջին համարը, որ իսկոյն արգելուեց և ենթարկուեց конфискации: Նոյն ամսագրի մի համար հրատարակել եմ 1883 և 1884 թուականներին և այդ թուին գլխաւոր կառավարութիւնից թուղթ եմ ստացել որ «Գործը» դադարեցրած է:

«Թղթակցի պաշտօններով եղել եմ.— Թաւրիզում 1885 Նով. Օրօզդէնի. Կ. Պօլսում իբրև Արձագանքի թղթակից 1895 թ. Լօնդօնում նոյն լրագրի թղթակից 1895 թուին, Պարիզում նոյն լրագրի թղթակից 1895 թ. Պարիզում «Նոր-Դարի» յատուկ թղթակից եմ սկսած 1899 թուականի հոկտեմբերից: Չմոռանամ յիշել որ աշխատակցել եմ և «Каспий» լրագրում հանգուցեալ Соколинский-ի խմբագրութեան օրով և գրել եմ թէ իմ ստորագրութեամբ և թէ «Гражданинъ» կեղծանուն տակ: Թէ որտեղ է տպուած իմ առաջին ըննասիրականը, դժուարանում եմ յիշել, որովհետև «բանասիրական» խօսքը մեր մէջ շատ մտքերով է հասկացուում և ես չըզիտեմ դուք ինչ մտքով էք գործածում: «Առաջին կրիտիքական» յօդուածս իբրև մատենախօսութիւն Պորենացու թարգմանութեան տպուած է Մշակի կարծեմ 1885 թ. մէջ. այդ յօդուածի առթիւ նոյն «Մշակի» մէջ հանգուցեալ Պորէն Ստեփանէն հրապարակաւ շնորհակալութիւն յայտնեց ինձ և գրեց որ այդ յօդուածի շնորհիւ իր թարգմանութիւնից վաճառուեց 2500 օրինակ:

«Առաջին հրապարակախօսական յօդուածս նոյնպէս «Մշակի» մէջ է 1885:

«Առաջին դիւցազներգական վէպիկս «Ալծեմնիկ» վերնագրով տպագրուած է «Աղբիւրի» մէջ (№-ը չեմ յիշում):

«Կեղծանուններ, Հրապարակախօսական, կրիտիքական վիպական գրուածներս ես միշտ ստորագրել եմ իսկական անունովս: Ֆելիետոններս կրել են «Ահրիման» կեղծ անունը («Տարազ» և «Արձագանք»): Թատրոնական բէցէնդիաններն ստորագրել եմ Յիօ (Տարազ, Тифл. Листокъ, Кавказъ, Нов. Обзор. Արձագանք): Ետտ կրիտիքական յօդուածներ ստորագրել եմ «Մար-Ամաղ»: Մանկական վէպիկներ և այլ յօդուածներ «Աղբիւրի» մէջ ստորագրել եմ «ժերովկ»: Պատահական կեղծանունները չեմ յիշում: Այսպիսով գլխաւոր կեղծ անուն-

ներս են.—«Ահրիման», «ՅԾ», «Մար-Ամադ», «ծերուկ» և շատ յաճախ Ս. Հ. ինիցեալները:

Իմ գրուածներս ցրուած են բոլոր լրագիրների ու հանդէսների մէջ, գլխաւորապէս Արձագանքի, Տարագի, Ազբուրի, Մշակի և վերջերս Նոր-Դարի մէջ: Կազմում են.—առաջնորդող յօդուածներ, Ֆիլիսոսօսներ, մամուլի տեսութիւն, վէպիկներ, զրոյցներ, թղթակցութիւններ ևն:

«Մի փոքրիկ յանձնաժողով որ զբաղուած է իմ գրուածներս կարգի բերելով և որ մտադիր է առանձին գրքերով հրատարակել, երկու ամիս սրանից առաջ ինձ հաղորդեց Թիֆլիզից հետեւալը որ բառառբառ արտագրում եմ. Ձեր գրուածները պիտի կազմեն 14 հատոր մեծադիր գրքեր քառածալ, իւրաքանչիւր գիրքը մօտաւորապէս 300 էրեսից: Այդտեղ հաշուած են միայն այն գրուածքները, որոնց տակ իմ իսկական ստորագրութիւնս կայ:

«Բացի դրանից առանձին հրատարակութեամբ լոյս են տեսել իմ հետեւալ աշխատութիւններս.— 1) «Մանիկ», նորավէպ ժամանակակից կեանքից, 2) Մրցումն հասարակութեան հետ էրգ. Լիֆլէրի, 3) Դօքտոր Շտոկման կամ ժողովրդի թըշնամին—Իբսէնի:

Հայոց բեմի վրայ խաղացուած են հետեւալ թատերական պիէսները իմ թարգմանութեամբ «Նըջանկովիւնը խաղաղ անկիւնում»—Չուրքեմանի, «Փշոտ ճանապարհ» նոյն հեղինակի, «Հոգուով աղքատներ»—Պօտեխինի: Կհաւատմք որ ասեմ մնացեալները մոռացել եմ:

Ի դէպ յիշեմ որ 1895—96 թուականներին կառավարել եմ Թիֆլիսի թատերական խումբը, 1897—98 Բազում հրաւիրուած եմ եղել մշտական հայկական խմբի ռեժիսոր:

Ահա այն պատասխանները որ ես կարողացայ տալ Ձեր հարցումներին: Չգիտեմ նրանք կգոհացնեն ձեզ թէ ոչ: Ինձ գոնէ նրանք ոչ մի առանձին զուարճութիւն չեն պատճառում որովհետև դրանք ցուցակ են, չոր ու ցամաք ցուցակ 22 տարուան իմ կրած տանջանքների և հոգեկան տանջանքների, որոնց մէջ հոգեկան զուարճութիւնը շատ քիչ մասն է ունեցել... դեռ մեռնելու մտադիր չեմ և կտակս չեմ պատրաստել: Յոյս ունիմ դեռ գրել երեք անգամ աւելի քան մինչև այժմ եմ գրել: Առաջիկայ տարուանից վերջնականապէս նուիրվում եմ բեյլետրիստիկային և դրամատիքական գրականութեան...»:

Հազուցեալս ինձ այս նամակը գրել է Փարիզից 1900 թ. դեկտեմբեր 25-ին (նոր տոմար):

ՀԱՅԿ ՏԷՐ. ԱՍՏՈՒԱՍՏՏՐԵԱՆ